



**Առողջության ապահովագրության շրջանակներում կատարված ծախսերի ամբողջական փոխհատուցման մերժում՝ հիմքով, որ դրանք կրում են կոսմետիկ բնույթ**

Առողջության ապահովագրության շրջանակներում Հաճախորդը հանդիսանում է ապահովագրված անձ: Նկատելով մաշկի անսպասելի ցանավորում՝ վերջինս անհապաղ դիմել է բժշկական կենտրոն՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Ապահովագրական ընկերությանը: Հետազոտությունից հետո Հաճախորդի մոտ ախտորոշվել է մաշկային հիվանդություն և նշանակվել բուժում: Հաճախորդը զարմանքով պարզել է, որ Ապահովագրական ընկերությունը հրաժարվում է փոխհատուցել հետազոտության և բուժման համար կատարված ծախսերը, իսկ գրավոր դիմումից հետո համաձայնել է փոխհատուցել ծախսերի միայն մի մասը:

Քաջատեղյակ լինելով Ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեությանը՝ Հաճախորդը խնդրի մասին տեղեկացրել է Գրասենյակի մասնագետներին՝ հուսալով Հաշտարարի միջնորդությամբ ստանալ կատարված ծախսերի ամբողջական փոխհատուցում:

Ֆինանսական համակարգի հաշտարարը, սկսելով գործի քննությունը, Ապահովագրական ընկերությունից պահանջել է ներկայացնել գրավոր պարզաբանումներ և բացատրություններ: Վերջինս էլ իր հերթին նշել է, որ անցկացրել է մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքում պարզ է դարձել, որ Հաճախորդի մոտ հայտնաբերված հիվանդությունը կարելի է համարել կոսմետիկ բնույթի, ավելին՝ այն կրում է իրոնիկ բնույթ և փոխանցվում ժառանգաբար:

Հաշտարարի կողմից ներգրավված բժիշկ-մասնագետների շնորհիվ պարզ է դարձել, որ Հաճախորդի կողմից ձեռք բերված միջոցները կոսմետիկ չեն եղել և կրել են բուժական նպատակ, քանի որ ախտորոշված հիվանդությունը ընդգրկված է հիվանդությունների միջազգային դասակարգման մեջ:

Մանրամասն ուսումնասիրելով պայմանագրի դրույթները՝ Հաշտարարը հանգել է այն եզրակացության, որ Հաճախորդի պահանջն արդարացի է: Հատկանշական է, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը գործը քննելիս դեկավարվում է կողմերի հաշտեցման հիմնական սկզբունքով, ուստի վերջինս Ապահովագրական ընկերության ներկայացուցիչներին հորդորել է գտնել հաշտության եզրեր: Մակայն Ընկերության կողմից ստանալով մերժում՝ Հաշտարարը կայացրել է բավարարման որոշում՝ այդպիսով իսկ վերականգնելով Հաճախորդի խախտված իրավունքները: